

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Սույն թվականի ապրիլի 2-ից 4-ը Մոսկվայում տեղի է ունեցել «Տիեզերքն առանց կենքի» թեմայով խաղաղությանը նվիրված միջազգային կոնֆերանս, որին իրենց մասնակցությունն են բերել աշխարհի 26 երկրներից ցամանած տարբեր կրոնների ներկայացուցիչներ՝ քրիստոնյաներ, մահմեդականներ, մովսիսականներ, հինդու կրոնի ներկայացուցիչներ, բուդդայականներ և այլն, ընդամենը շուրջ 60 հոգի: Մասնակիցների թվում եղել են հայտնի գիտնականներ, տիեզերագետներ և բազմաթիվ հյուրեր:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սույն կոնֆերանսին, որպես հյուր, մասնակցել է նաև Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, որը կոնֆերանսի նախագահ, Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետին փոխանցել է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ժողովին ուղղված բարի մաղթանքներն ու ցանկությունները:

Ապրիլի 3-ին «Ուկրաինա» հյուրանոցի դահլիճում կոնֆերանսի մասնակիցներին ընդունել և ողջունել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը: Իր ողջույնի խոսքի մեջ Ռուս Եկեղեցու պետը անդրադարձել է ներկա միջազգային լարված դրությանը և այն մեծ դերին, որ այսօր ի վիճակի են կատարելու տարբեր հավատի և դավանության տեր մարդիկ, հոգևորական թե աշխարհական, աշխարհի խաղաղության պահպանման պատասխանատու և դժվարին գործում: Իր խոսքի վերջում նա հաջողություններ է ցանկացել կոնֆերանսի աշխատանքներին:

Հաջորդ երկու օրերին ժողովի մասնակիցները լսել են մի շարք զեկուցումներ տիեզերքի և նրա սպառազինման վտանգավոր հետևանքների վերաբերյալ: Զեկուցել են տարբեր երկրներից հրավիրված ականավոր գիտնականներ:

Ապրիլի 4-ին, հավարտ կոնֆերանսի, կազմվել և ժողովականների կողմից միաձայն հաստատվել է խաղաղության պահպանման օգտին մի հաղորդագրություն՝ ուղղված պետությունների ղեկավարներին: